ԱՍՏՐԱԲԻՐ



ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԱՌՔԵՐԻ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

Հ. Գ. Ավետիսյան
Ն. Հ. Ավետիսյան

Վերջին տասնամյակներում Հայկական լեռնաշխարհի տարբեր հատվածներում կատարված պեղումները զգալիորեն թարմացրին Վանի թագավորության պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Նորահայտ նյութերի հետ մեկտեղ շրջանառության մեջ մտան ավանդական պատկերացումներից արմատապես տարբերվող նոր մեկնաբանություններ ու տեսակետներ: Մասնավորապես, Արևմտյան Հայաստանում, Վանա լճի առափնյա շրջաններում և Հայաստանի Հանրապետության տարածքում կատարված պեղումներն առիթ տվեցին, որպեսզի ուրարտական մշակույթի ծագումնաբանության և զինարվեստի հարցերը նոր տեսակետով գիտական ասպարեզ մտնեն[1]: Հրապարակի վրա են նաև Վանի թագավորության կործանման, ավարտական փուլի նոր մեկնաբանություններն և թվագրությունը, արքայացանկում փոփոխություններ կատարելու առաջարկները և այլն: Ռ. Բառնետի, Տ. Սուլիմիրսկու, Ֆ. Քյոնիգի կողմից առաջ քաշված այն տեսակետը, որ Վանի թագավորությունն անկում է ապրել մ.թ.ա. 640-ական թվականներին, ներկայումս պաշտպա-

---

[1] Տե՛ս. **Հ. Գ. Ավետիսյան, Պ. Ս. Ավետիսյան,** Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա XI-VI դդ., Երևան, 2006, էջ 3-4:

V. **Sevin,** The Origins of the Urartians in the light of the Van/Karagündüz Excavations, Anatolian Studies, 49, 1999, pp. 159-164; Reindell I., Salvini M., Die urartäischen Hohlmaße für Flüssigkeiten, SMEA, 43, 2001, S. 119-139; Zimansky P., Ancient Ararat. A Handbook of Urartian Studies, Delmar, New York, 1998. Özguç T., Altintepe. Türk Tarih Kurumu Yayinlanindan, Series 5, no. 24, Ankara, 1966; Özguç T., Altintepe II. Türk Tarih Kurumu Yayinlanindan, Series 5, no. 27, Ankara, 1969; Özguç T., Urartu and Altintepe, "Archaeology" 22, 1969, p. 256-263; Lloyd S., Burney Ch.A., Excavations at the Urartian Citadel of Kayalidere, "Türk Arkeoloji Dergisi", 14 (1-2), 1965, s. 217-222; Tarhan M.T., Recent Research at the Urartian Capital Tushpa, "Tel Aviv", 21, 1994, p. 22-57; Salvini M., Reflections about the Urartian Shrines of the Stelae. In: "Aspects of Art and Iconography: Anatolia and Its Neighbors". Studies in in Honor of Nimet Özguç, ed. J.M.Mellink, E.Porada, T. Özguç, Ankara, 1993, p. 543-548; Çilingiroğlu A., The Early Iron Age at Dilkaya. In Anatolian Iron Ages. The Proceedings of the Second Anatolian Iron Ages Colloquium Held at Izmir (4-8 May, 1987), ed. A. Çilingiroğlu, D.H. French, Oxford, 1991, p. 29-38; Zafer D., The Urartian Cremation Jars in Van and Elaziğ Museums. In: Anatolian Iron Ages 3. The Proceedings of the Third Anatolian Iron Ages Colloquium Held at Van (6-12 August, 1990) ed. A. Çilingiroğlu, D.H. French, Ankara, 1994, p. 49-62; Kutlu E., Altintepe'de Urartu Seramiği (The Urartian Pottery from Altintepe), Belleten, 1969, 33, s.291-301; Korbe G., Sağlamtimur H., Çevik Ö., Potteri. In: "Ayanis I. Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998" (Eds. A. Çilingiroğlu, M.Salvini), Roma, 2001, p. 85-153; Sevin V., Özfirat A., Kavakli E., 1997-1998 Van/Altintepe Urartu Nekropolü Kazibari, "Kazi Sonuçlari Toplanisi", XXI/1, Ankara, 2000, s. 421-434.

նում են Ս. Կրոլը, Մ. Սալվինին, Պ. Զիմանսկին և այլոք[1]: Հատկապես կարևոր է Ուրարտական մշակույթի ուսումնասիրության հիմնախնդիրը:

Այս հարցի շուրջ իրենց հստակ դիրքորոշումն են արտահայտել վերոհիշյալ գիտնականները: Սակայն այսօր, պեղված և գիտական շրջանառության մեջ դրված մշակութային նմուշները նոր տեսակետների և ենթադրությունների հնարավորություններ են ընձեռում: Ուրարտական մշակույթի տիպաբանական կազմը ցույց է տալիս, որ Վանի թագավորության գոյատևման 250 և ավելի տարիների ընթացքում մշակութային գտածոները ձևաբանական խիստ փոփոխություններ չեն կրել: Դրանք պետականության շրջանակներում ստանդարտացված արհեստագործական նմուշներ են, որոնք պատրաստվել են պետության պատվերով՝ օգտագործվել են ինչպես ներքին կարիքները բավարարելու, այնպես էլ երկրի ծայրամասեր արտահանելու համար: Հատկապես այդ երևույթը իր վառ արտահայտությունն է գտել Վանի թագավորության հուշարձաններում:

Բնականաբար, այս հանգամանքը կանխորոշիչ դեր պետք է ունենար ինչպես Վանի թագավորության կազմավորման, այնպես էլ գոյատևման հետագա փուլերում: Ակնհայտ է նաև, որ վերոհիշյալ իրավիճակը փաստող ելակետային տվյալների վերլուծությունները կարևոր նշանակություն են ձեռք բերում, այսպես կոչված» ուրարտական էքսպանսիային «համընթաց ձևավորող նոր իրողությունների քաղաքական, ռազմական, տնտեսական համակարգի, վարչա- տարածքային ստորաբաժանումների, սոցիալական կազմի դրանցով պայմանավորված՝ Վանի թագավորության, որպես տերության կազմավորման «մեխանիկան» հասկանալու և վեր հանելու համար: Նշենք նաև, որ «ուրարտական էքսպանսիա» ասելով նկատի ունենք ոչ միայն ռազմական նվաճումները, այլև մշակութային նոր իրողությունների տարածումն ու արմատավորումը տարածաշրջանում:

[1] Տե՛ս. Հ.Գ. Ավետիսյան, Պ.Ս.Ավետիսյան, Արարատյան դաշտի մշակույթը Մ.թ.ա XI-VIդդ, Երևան, 2006:
R. D. Barnett, Further Russian Excavations in Armenia, Iraq, 21, 1959, pp. 1-19. T. Sulimirski, Scythian Antiquities in Western Asia, "Artibus Asiae", 17, 1954, pp. 282-318. F. W. König, Handbuch der Chaldischen Inschriften, Archiv für Orientforschung, Graz, 1955-57. St. Kroll, Urartus Untergand in anderer Sicht, Istanbuller Mitteilungen, 34, 1984, s. 151-170. M. Salvini, Geschichte und Kultur der Urartäer, Darmstadt, 1995. P. Zimanssky, The Kingdom of Urartu in Eastern Anatolia, Civilisations of the Ancient Near East, II, New York, 1995, pp. 1140-1141. Նույնի Archaeological inquiries into ethnolinguistic diversity in Urartu, in: Greater Anatolia and the Indo-Hittite Language Family, Journal of Indo-European Studies, Monograph Number 38, Washington D.C. 2001, p. 15-27. Տե՛ս նաև՝ W. Kleiss, Bastam II, Ausgrabungen in den Urartäischen Anlagen 1977-78, Berlin, 1988. Ph. Kohl, St. Kroll, Notes on the Fall of Horom, Iranica Antiqua, v. XXXIV, 1999, pp. 243-259. И.Н. Медведская, Периодизация скифской архаики и древний Восток, Российская Археология, 1992, 3, с. 86-107, **И. М. Дьяконов**, Киммерийцы и скифы на древнем Востоке, Российская Археология, 1994, 1, с. 108-116, Г. Н. Курочкин, Хронология переднеазиатских походов скифов по письменным и археологическим данным, Российская Археология, 1994, 1, с. 117-122.

Հայաստանի տարածքում վերջին տասնամյակներում կատարված պեղումները նույնպես զգալիորեն ընդլայնել են տարածաշրջանի մ. թ. ա. XI-VI դդ. պատմության և մշակույթի ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը: Վերը հիշատակված խնդիրների պարզաբանման համար սկզբունքային նշանակություն ունեն հատկապես երկաթդարյան հուշարձանների պեղումների արդյունքները: Սակայն կուտակված տվյալներն ու նյութերը վերը նշված առումներով արժեքավորման կարիք ունեն: Հատկանշական է, որ Կարմիր բլուրի պեղումներից հետո հատուկ ուսումնասիրության առարկա դարձան ուրարտակյութական փոխառնչությունները, սակայն բուն տարածքների մինչուրարտական և Վանի թագավորների նվաճումներից հետո հնագիտական իրողությունների համեմատության արդյունքները ներկայացնում էին թռուցիկ արկնարկների միջոցով: Նշված խնդիրներին մեծ ուշադրություն է դարձրել Հ. Մարտիրոսյանը: Մեծանուն գիտնականը փաստորեն առաջին անգամ, կոնկրետ նյութերի վերլուծության արդյունքից ելնելով, սահմանեց Վանի թագավորության կազմի մեջ ընդգրկված անդրկովկասյան հասարակությունների մշակույթի հիմնական տարբերակի հատկանիշների կազմը, դրանց առանձնահատկությունները ու կապը մինչուրարտական փուլերի հետ: Միաժամանակ, մի շարք հնագիտական համալիրների նյութերի վերլուծությամբ վեր հանվեց ուրարտական մշակույթի հսկայական ազդեցությունը «տեղաբնիկների մշակույթի» վրա[1]: Ուրարտական և «վաղ հայկական» մշակույթների ժառանգական կապերի վերհանման առումներով բացառիկ տեղ ունեն Գ. Տիրացյանի դիտարկումներն ու փաստագրումները[2]:

Այսպես կոչված «ուրարտական» և «տեղական» մշակույթների փոխազդեցության փաստերի վերահանման նպատակով, Վանի թագավորության մշակույթին անդրադարձել են Ս. Եսայանը, Է. Խանզադյանը, Հ. Ավետիսյանը, Ս. Հմայակյանը և այլոք:

Միաժամանակ Մեծամորի, Օշականի և Արամուսի պեղումների արդյունքներն ու դրանց մեկնաբանությունները հիմնովին թարմացրեցին տարածաշրջանի մ.թ.ա. XI-VI դդ. պատմահնագիտական համապատկերի

[1] **Б. Б. Пиотровский**, Кармир-Блур I, Ереван, 1950, с. 86-97, Նույնի՝ Ванское царство, Москва 1959.
[2] **А. А. Мартиросян**, Раскопки в Головино, Ереван, 1954, Նույնի՝ О древнем поселении и могильнике близ Ленинакана, КСИИМК, 55, 1954. с. 106-116, Նույնի Раскопки в Кировакане и некоторые памятники раннеурартского периода (IX-VIII вв. до н. э.), Լրաբեր հասարակական գիտությունների, 9, 1956, էջ 61-84, Նույնի Город Тушебаини, Ереван, 1961, Նույնի Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

վերակազմության աղբյուրագիտական հիմքը[1]: Նշենք նաև, որ Հայաստանի տարածքի երկաթեդարյան հուշարձանների պեղումներից ձեռք բերված նյութերի ուսումնասիրության ընթացքում տարբեր հեղինակներ անդրադարձել են այս խնդիրներին արձանագրելով փոխազդեցությունների անառարկելի փաստերը[2]:

Սակայն «ուրարտական մշակութային էքսպանսիան» և նրա ընթացքի, հետևանքների և դրսևորման առանձնահատկությունների լուսաբանման «հնագիտական ասպեկտները», որպես ինքնավար խնդիր, չեն արժեքավորել և քննարկման առարկա չեն դարձել:

Մինչդեռ, մ. թ. ա. XI – IX դդ խիստ ինքնատիպ մի մշակութային արեալի կարևորագույն կենտրոն հանդիսացող և նոր տերության ձևավորման սկզբնափուլից «ուրարտական մակույթի» խոշորագույն անկլավի վերածված տարածաշրջանի պատմահնագիտական իրավիճակի փուլ առ փուլ վերակազմությունը և համեմատական քննությունը բազմաթիվ հարցերի պատասխան են ենթադրում: Ուրարտական մշակույթի ուսումնասիրությունը ներկայացվում է վերը նկարագրված տեսակետների համատեքստում, որի համար ելակետային նշանակություն ունի ուրարտական համալիրներից հայտնաբերված գտածոների արժեքավոր բազմաքանակ հավաքածուները:

Վանի թագավորության զինարվեստին վերաբերող մարտակառքերի և հեծյալների բազմաթիվ հետաքրքիր պատկերներ են հանդիպում բրոնզե վահանների, գոտիների, կապարճների, սաղավարտների, կնիքների և այլ հնագիտական արտեֆակտերի վրա: Բացի այդ ուրարտական և ասորեստանյան գրավոր աղբյուրներում՝ սեպագիր տեքստերում առատ տեղեկություններ կան երկրների նվաճման, այլ ավարների հետ մեկտեղ զենքեր, հեծկան ձիեր, ծանր ու թեթև մարտակառքերի մասին: Այսպես՝ Թիգլաթ-պալասար 1-ինը իր արձանագրություններում հայտնում է, որ ինքը Նաիրիի 60, մյուս դեպքում 23 թագավորների ջախջախելով գրավել է հարյուրավոր մարտակառքեր և հազարավոր ձիեր: Ավելի շատ տվյալներ կան Արգիշտի 1-ինի արձանագրություններում: Դրանցից մեկում Արգիշտին նշում է, որ Դիաուխիից նա գրավել է 4426 ձի: Բացի այդ, պարտությունից հետո Դիաուխիի թագավորը նվիրել է 1000 ձի, պարտավորվելով տարեկան տալ ևս 300 հեծկան ձի: Ուրարտական զինարվեստի բարձր մակարդակի

[1] **Г.А. Тирацян**, Культура древней Армении: VI в . до н.э III- в. н. э., Ереван, 1961, նույնի Урарту и Аременуя (к вопросу о преемственности материальной культиры), II международный симпозиум по армянскому искусству, Ереван , 1978, с. 181-191.

[2] **Է. Վ. Խանզադյան, Կ. Հ. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան**, Մեծամոր, Երևան,1973, С. А. Есаян, А. А. Калантарян, Ошакан, I, Ереван, 1988., Հ. Գ. Ավետիսյան, Պ. Ս. Ավետիսյան, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա, XI-VI դդ., Երևան, 2006:

մասին է վկայակոչված ասուրական տիրակալ Սարգոն 2-րդի մ.թ.ա. 714թ. թողած սեպագիր արձանագրության մեջ: Սարգոն 2-րդը միայն Մուսասիրի տաճարում գրավել է 114 տոննա պղինձ և տարբեր առարկաներ: Դրանց թվում տիրակալը նշում է 25212 ծանր և թեթև վահաններ, 1514 նիզակ, 305412 ծանր և թեթև թրեր, 607 անոթներ, Սարդուրի 1-ի, Արգիշտի 1-ի, Ռուսա 1-ի արձանները: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Վանի թագավորների կողմից Ուրմիայի շրջան ուղարկված արշավի ժամանակ բանակում կար 106 մարտակառք, 9174 հեծյալ և հազարավորների հասնող հետևակ:

Էրեբունուց, Կարմիր բլուրից (Թեյշեբաինի), Արգիշտիխինիլի, Արևմտյան Հայաստանի հնավայրերից՝ Վան, Հայկաբերդ, Այանիս և այլն հայտնաբերված գտածոների վրա պատկերված են ռազմական գործողություններ, արքունական որսի և պաշտամունքային արարողությունների տեսարաններ: Հատկապես առատ տեղեկություններ են պատկերագրված բրոնզե գոտիների վրա: Հնագույն վարպետները մանրամասնորեն նկարել են մարտակառքը, ձիերին առանձին հեծյալների, որոնք հետապնդում են ցուլերին ու առյուծներին, թշնամուն, որոնց մի մասն արդեն վիրավոր են և նրանց մեջքերին, կրծքերին, վզերին ցցված են նետեր: Բոլոր հեծյալները պատկերված են շարժման մեջ: Հեծյալները և մարտակառքերը սլանում են արշավով, կենդանիների մի մասը սրարշավ փախչում կամ հարձակվում են որսորդների վրա, իսկ մյուսները մահացած են կամ մահամերձ փորձում են բռնել մարտակառքի անիվները: Պատկերված են զինվոր՝ կառապանը և նետաձիգը, նիզակակիր զինվորը: Հետաքրքիր է, որ զինվորներից ոչ մեկը չունի վահան, չնայած այն հանդիպում է Կարմիր բլուրում և այլ տեղերից գտնված հեծյալների ձեռքում: Հետաքրքիր է, որ այս մարտակառքերը նման են Կարմիր բլուրի սաղավարտների վրա պատկերված մարտակառքերին և, ինչպես այդ մարտակառքերը, ունեն թեթևացած թափք և վեց, յոթ ճաղանի անիվներ: Ձիերը լծված են խամութով: Նրանց մեջքերը ծածկված են շքեղ ծածկոցներով և վարվում են սանձափոկերով: Ձիերի գլուխները զարդարված են հովհարաձև և զանգակաձև զարդերով: Մարտակառքերի թափքերում կանգնած զինվորների և հեծյալների գլուխները ծածկված են սրածայր սաղավարտներով: Նման պատկերներ պահպանվել են և այլ գոտիների վրա: Այսպես, Ադանայի թանգարանի և Արևմտյան Հայաստանի այլ վայրերից գտնված բազմաթիվ գոտիների, վահանների, սաղավարտների վրա պատկերված են որսի տեսարաններ, որտեղ չնայած սյուժեի տարբերությանը, մարտակառքերի և հեծյալների պատկերները գրեթե չեն տարբերվում: Այս տեսակետից ավելի հետաքրքիր է Ներքին խնձորի (Կայալի դերե) ամրոցից գտնված բրոնզե գոտու բեկորը: Այստեղ պարզ երևում

են երկու մարտակառք և թափքում կանգնած սրածայր սաղավարտներով երեք զինվոր, որոնցից մեկը կառավարում է կառքը, մյուսը արձակում է նետը, երրորդը նիզակով խփում է թափքի վրա հարձակվող առյուծին: Ոչ պակաս հետաքրքրություն է ներկայացնում Մեծամորի բրոնզե գոտին, որտեղ այլ կենդանիների հետ մեկտեղ երևում է նաև ազատ վազող ձի: Այստեղ պատկերված է մի մարտակառք և մի հեծյալ: Պատկերված մարտակառքի թափքում, ի տարբերություն բոլոր մյուս մեզ հայտնի մարտակառքերի, երևում է մեկ զրահակակիր զինվոր: Գոտիների վրա պատկերված տեսարաններում աչքի են ընկնում մարտակառքերի և հեծյալների մասնակցությամբ առյուծների և ցուլերի հետապնդումները: Այս որսորդների վրա, ինչպես և Էրեբունիի գոտիների տեսարաններում հարձակվում են ինչպես գիշատիչներ, այնպես էլ ցուլեր: Այստեղ պատկերված մարտակառքերը պատկանում են թեթև մարտակառքերի տեսակին: Դրանց թափքում կանգնած է կառապանը և նետաձիգ զինվորը: Սակայն տեսարանը արված է ազատ ոճով: Ոչ մի մարտակառք չունի քաշան: Ձիերը կարծես ազատ վազում են մարտակառքի ետևից, իսկ դրա փոխարեն պարզ պատկերված են սանձափոկեր: Անիվներն ունեն չորս, վեց ճաղ, որոնք մեծ մասամբ ձևավոր են և միայն մի քանիսն ունեն ուղիղ ձողերի ձև: Հեծյալները կառավարում են ձիերին սանձափոկերով կամ փոքրիկ փայտիկով: Ձիերի մի մասի պոչերը ազատ արձակ են և ծածանվում են, մյուսները կարճ կապած են: Ձիերի գլուխները զարդարված են հովհարաձև զարդով: Հեծյալներն ունեն նիզակներ, սաղավարտներ, սակայն չունեն վահաններ: Մարտակառքերի զինվորները զինված են սաղավարտներով ու նետ ու աղեղով: Երևանից գտնված գոտիներից մեկի վրա պատկերված տեսարանում կան թևավոր ձիեր, որոնց սմբակների փոխարեն առյուծի թաթեր են: Մարտակառքերի մի մասը պատկերված են սրընթաց վազքով, իսկ մյուսները հանդիսավոր երթի ձևով: Ձիերը շարժվում են ազատ՝ բարձրացրած ձախ կամ աջ ոտքերը:

Հետաքրքիր արվեստի նմուշ է Տոկիոյի թանգարանում պահվող գոտիներից մեկը: Նրա ամբողջ մակերեսը ծածկված է որսի տեսարանով: Ձախ կողմում պատկերված առյուծներին և ցուլերին հետապնդում են ձախ ձեռքում վահաններով զինված հեծյալները: Ձախ ձեռքում նրանք պահում են սանձը, իսկ աջում՝ նիզակներ, որոնցով նրանք հարվածում են կենդանիներին: Հեծյալներն ու ձիերը տրված են խիստ ոճավորված, միայն երևում է, որ նրանք վազում են արշավով, առանց որևէ մանրամասների ընդգծման, իսկ հեծյալների գլխին կան նաև սրածայր սաղավարտներ: Աջ կողմում պատկերված են նաև հեծյալներ, որոնք հետապնդում են առյուծներին ու ցուլերին:



Գիտակցական հոդվածներ ժողովածու. Կանգնեցնող կամ գրոհող ձիերի պատկերներով գոտի

Գոտու աջ հատվածի ծայրում պատկերված են հինգ մարտակառքեր, որոնցից յուրաքանչյուրի թափքում կանգնած են երկու զինվոր: Ինչպես և մի շարք այլ գոտիների վրա՝ մարտակառքի թափքի վրա են հարձակվում վիրավոր առյուծներ: Այստեղ առյուծներից մեկը բարձր թռիչքով հարձակվում է զինվորներից մեկի վրա, բայց նետահարվում է և վայր ընկնում: Մարտակառքերը և ձիերը ոչնչով չեն տարբերվում մյուս գոտիների վրա եղած պատկերներից: Այս գոտածոների մեջ բացառիկ արժեք է ներկայացնում Վերին Անզաֆից պեղված վահանի վրայի պատկերը, որտեղ պատկերագրված է աստվածների շքերթը և պատերազմի տեսարան: Ուրարտական աստվածներին առաջնորդում է Խալդին: Պանթեոնի աստվածները պատկերված են շքեղ սպառազինությամբ և հանդերձանքով: Ռազմական գործողությունների մանրամասն նկարագրությունը կատարված է մեծ վարպետությամբ: Հատկապես հետաքրքիր է մարտակառքը, որն աչքի է ընկնում սրընթացությամբ:

Ի մի բերելով շարադրանքը կարող ենք հաստատագրել, որ Վանի թագավորության զինարվեստում բացառիկ նշանակություն ուներ մարտակառքերի զորատեսակը, ինչը ուրարտական բանակի հիմնական և կարևոր բաղադրիչներից էր: